

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Սույն թվականի մարտի 6-ին Հայաստանում տեղի ունեցան ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի ընտրությունները: Քվեարկությունն ամենուրեք սկսվեց առավոտյան ժամը 6-ին և ավարտվեց գիշերվա ժամը 12-ին: Ընտրություններն անցան ժողովրդի բացառիկ խանդավառության և քաղաքական միասնության պայմաններում՝ դրսևորելով հայ ժողովրդի անսահման սերն ու նվիրվածությունը ղեպի իր հարազատ Սովետական իշխանությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով ամբողջ ռեսպուբլիկայում 882.081 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 881.949 մարդ կամ 99,99 տոկոսը: Առաջագրված թեկնածուների օգտին քվեարկել է 880.702 հոգի կամ 99,84 տոկոսը, դեմ՝ 1241 մարդ կամ 0,14 տոկոսը:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության 37-րդ հոդվածի հիման վրա, կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետում ընտրված բոլոր ղեկավարներին:

Գերագույն Սովետում ընտրված են 300 ղեկավարներ, որոնցից 68-ը Նրեանից, 23-ը Լենինականից, 11-ը Կիրովականից, 9-ը Ալավերդու, 11-ը Արտաշատի, 8-ը Ղափանի, 10-ը Էջմիածնի շրջաններից և այլն:

Ընտրված ղեկավարներին թվում են բանաստեղծ Ա. Իսահակյանը, գրողներ Դ. Դեմիրճյանը, Արաղին, Ն. Զարյանը, ժողովրդական նկարիչ Գ. Գյուլբյանը, կոմպոզիտոր Հ. Ստեփանյանը, ժողովրդական գերասաններ Օ. Գուլազյանը, Վ. Վաղարշյանը, ինչպես նաև բանվորներ, գյուղացիներ, գիտության և կուլտուրայի գործիչներ:

ՏՆՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Մարտի 6-ին Հայաստանում տեղի ունեցան նաև աշխատավորների ղեկավարների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունները: Ընտրվեցին ղեկավարներ ռեսպուբլիկայի 31 շրջանային Սովետների, 12 քաղաքային Սովետների, Նրեան քաղաքի 5 ռայոնական Սովետների, 440 գյուղական Սովետների և 21 ավանային Սովետների համար:

Ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ ընտրողների հոծ մեծամասնությունը, գրեթե 99,90 տոկոսը քվեարկել է առաջագրված թեկնածուների օգտին: Վերահիշյալ բոլոր Սովետներում ընտրվել են 12.596 ղեկավարներ, որոնցից 4.189 կին: Ընդհանուր թվից 5.400 ղեկավարներ անպարտիական են:

Աշխատավորների ղեկավարներին Նրեանի քաղաքային Սովետի ընտրություններին մասնակցեց ընտրողների 99,98 տոկոսը: Քվեարկության մասնակցած ընտրողների 99,87 տոկոսը քվեարկել է առաջագրված թեկնածուների օգտին: Քաղաքային Սովետում ընտրվել են 345 ղեկավարներ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԵՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԵՒ ՍՄԸ.— Մարտի 15-ին Նրեանում տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված նիստը: Բացի կոմիտեի անդամներից նիստին մասնակցում էին հասարակական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության և արվեստի գործիչներ, արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողներ և այլն:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը նիստում զեկուցեց ատոմային պատերազմի նախապատրաստման դեմ խաղաղության Համաշխարհային հորհրդի կողմից ընդունված Դիմումի տակ ստորագրություններ հավաքելու մասին: խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի որոշմամբ սույն թվականի ապրիլի 1-ից Սովետական Միությունում սկսվելու է վերահիշյալ Դիմումի տակ ստորագրությունների հավաքումը: Զեկուցողը հույս հայտնեց, որ Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորները միահամուռ կերպով կստորագրեն խաղաղության Համաշխարհային հորհրդի Դիմումի տակ և դրանով իսկ իրենց ձայնը կմիացնեն աշխարհի խաղաղասեր ժողովուրդներին ձայնին, որոնք պահանջում են վերջ դնել նոր պատերազմի նախապատրաստմանը, արգելել մասսայական ոչնչացման ամեն տեսակի զենքի գործադրումը:

Զեկուցման առթիվ ելույթ ունեցան բանաստեղծ Գ. Սարյանը, Նրեանի Գյուղատնտեսական ինստիտուտի պրոֆեսոր Գ. Աղաջանյանը, Լենինականի տեքստիլ գործարանի ջուլհակուհի Մ. Խաչատրյանը և ուրիշներ: Նրանք բոլորն էլ արտահայտվեցին խաղաղության Համաշխարհային հորհրդի Դիմումի օգտին և հայտարարեցին, որ բոլոր աշխատավորները մեծ սիրով իրենց ստորագրությունները կդնեն այդ Դիմումի տակ:

Նիստում հանդես եկավ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը: Նա իր խոսքն ուղղեց բոլոր հավատացյալ հայերին՝ կոչ անելով նրանց իրենց ստորագրությունները դնել խաղաղության Համաշխարհային հորհրդի Դիմումի տակ, պայքարի ենել ընդդեմ ատոմային պատերազմի սպառնալիքի:

Կոմիտեն ընդունեց բանաձև, որով հավանություն է տրվում խաղաղության Պաշտպանության Սովետական կոմիտեի որոշմանը՝ ապրիլի 1-ից Սովետական Միությունում խաղաղության Համաշխարհային հորհրդի Դիմումի տակ ստորագրություններ հավաքելու մասին և կոչ է արվում ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորներին իրենց ստորագրությունները դնել այդ Դիմումի տակ:

Նիստում ընտրվեց 20 հոգուց բաղկացած պատվիրակություն՝ խաղաղության կողմնակիցների համամիութենական 5-րդ կոնֆերանսի համար:

Վերջում կոմիտեն ընտրեց նախագահություն բաղկացած 7 հոգուց: խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ ընտրվեց բանաստեղծ Նաիրի Զարյանը:

Նիստին ներկա եղողներն իրենց ստորագրությունները դրեցին հաղաղության Համաշխարհային հորհրդի Դիմումի տակ:

ՄԵՔԵՆԱՆԵՐ ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.— Սովետական Հայաստանում գյուղատնտեսական աշխատանքների մեծ մասը կատարվում է մեքենաների օգնությամբ, Ներկայումս վարի, ցանքի, դաշտերի մշակության, բերքահավաքի և կալսման աշխատանքների 70—80 տոկոսը, նույնիսկ ամենահեռավոր լեռնային շրջաններում կատարում են մեքենաները: Գյուղատնտեսական աշխատանքների լինքնաշարացման գործով զբաղվում են մեքենա-տրակտորային կայանները, որոնց թիվը հասնում է շուրջ 60-ի: Այս տարի այդ կայանները կստանան մեծ թվով նոր մեքենաներ՝ հատկապես բամբակենու մշակման ու բերքահավաքի, այգիների փոցիման, կերային արմատապտուղների ցանքի և բերքահավաքման, խոտհեծի և այլ աշխատանքների համար: Զգալի թվով մեքենաներ ու սարքեր են ստացվում անասնապահական տնտեսությունների մեքենայացման համար:

ՎԱՐԿԵՐ ԳՑՈՒՂԱՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ.— Կառավարությունը ամեն տարի խոշոր վարկեր է բաց թողնում կոլտնտեսություններին՝ գյուղատնտեսության զարգացման նպատակների համար: Այս տարի Հայաստանի Գյուղատնտեսական բանկը հիշյալ տնտեսություններին, միայն անասնապահական շենքեր կառուցելու և անասնաբուժության զարգացման հետ կապված աշխատանքների մեքենայացման համար, բաց է թողնելու 12.600.000 ռուբլի: Մեծ գումարներ են բաց թողնվելու կոլտնտեսությունների էլեկտրիֆիկացման, ագրեգատության զարգացման, հանքային պարարտանյութեր ձեռք բերելու, ինչպես նաև ոռոգման աշխատանքների համար:

ԵԳԻՊՏԱՑՈՐՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ.— Անասուններին կերով լրվել ապահովելու նպատակով, ընթացիկ տարում Հայաստանում մեծ թափով ընդարձակվելու են եգիպտացորենի ցանքատարածությունները: Օրինակ, միայն Ստեփանավանի շրջանում, որը ռեսպուբլիկայի կարևոր անասնաբուժական շրջաններից մեկն է, ցանվելու է 1.300 հեկտար եգիպտացորեն:

Այս կապակցությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում կայացավ հատուկ նիստ, որտեղ լավեց պրոֆեսոր Գ. Աղաջանյանի զեկուցումը՝ եգիպտացորենի մշակության հնարավորությունների և հեռանկարների մասին: Զեկուցման շուրջ արտահայտվեցին մի շարք գիտնական բաժանման: Գիտական հաստատությունները կոլտնտեսություններին լայն օգնություն են ցույց տալու եգիպտացորենի մշակության գործում և աշխատանք են տանելու՝ ստեղծելու եգիպտացորենի այնպիսի տեսակներ, որոնք հարմարվեն Հայաստանի հողա-կլիմայական պայմաններին:

ՐԱՐՁՐ ԵՎԱՄՈՒՆՆԵՐ ՄԵԱՆՈՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ.— Անցյալ տարի Հայաստանում ստացվեց ծխախոտի առատ բերք: Պետական մթերակայանները հանձնվեց

5.000 ցենտներ ավելի հումք, քան նախորդ 1953 թվականին:

Միայն առաջործությամբ զբաղվում են Հայաստանի գրեթե բոլոր շրջանները: Այդ թանկարժեք կուլտուրան խոշոր եկամուտներ է բերում կորեկտիվ տնտեսություններին: Այսպես, օրինակ, անցյալ տարի միայն Իջևանի շրջանի կոլտնտեսությունները ստացան մոտ 12.000.000 ռուբլի եկամուտ: Հանձնված հումքի դիմաց շուրջ 20.000.000 ռուբլի եկամուտ ստացան Շամշադինի շրջանի ծխախոտագործները: Նախատեսվածից ավելի հումք հանձնելու համար ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները, ծխախոտի հիմնական արժեքից բացի, ստացել են շուրջ 18.000.000 ռուբլի հավելյալ վարձատրություն:

ՐՈՒՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒՄ.— Կոտայքի շրջանի Ավան գյուղից ոչ հեռու, երբեմնի ամայի սարալանջերում գտնվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական այգին, որը գրավում է շուրջ 200 հեկտար տարածություն: Այստեղ կարելի է հանդիպել տարբեր կլիմայական գոտիներում աճող բույսերի՝ ծառերի ու ծաղիկների, լայն տեղ է հատկացված Հայաստանի բուսական աշխարհին:

Հետաքրքիր աշխատանք է կատարվում ծառերի տեսակավորման բաժնում: Այստեղ բույսերը խմբավորվում են առաջ ըստ դեկորատիվ հատկանիշների, իսկ 1954 թվականի աշնանից այդ խմբավորումը կատարվում է ըստ աշխարհագրական հատկանիշների: Ստեղծվելու են առանձին տեղամասեր արևմտյան կիսագնդի, Եվրոպայի, Կովկասի, Չինաստանի բույսերի համար: Արևմտյան կիսագնդի բաժնում արդեն տնկված են 100-ից ավելի տարբեր բույսեր, որոնք աճում են Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Ամերիկայում:

Այգու աշխատողները ձեռք են առել բոլոր միջոցները՝ բույսերը ձմռան ցրտերից պահպանելու համար:

ՏՆԽԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ.— Հայաստանի բազմաթիվ գիտա-հետազոտական հաստատություններից մեկն է հանդիսանում Գյուղատնտեսական տեխնիկական կուլտուրաների ինստիտուտը, որը գտնվում է Էջմիածնում: Ինստիտուտը զբաղվում է բամբակի, ծխախոտի և շաքարի ճակնդեղի մշակության ձևերի կատարելագործման, ինչպես նաև ռեսպուբլիկայի հողա-կլիմայական պայմաններին համապատասխան նոր տեսակների ստեղծման հարցերով: Այն ունի իր մասնաճյուղերը Հոկտեմբերյանում և Ախուրյանում: Ինստիտուտի 27 գիտական աշխատողներից 12-ը գիտության թեկնածուի աստիճան ունեն, Նրանց համար ստեղծված են աշխատանքի բոլոր պայմանները: Ինստիտուտն ունի նյութական-տեխնիկական մեծ հնարավորություններ, 6 լաբորատորիա:

ՉԻՆԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Փետրվարի կեսերին մի քանի օրով Հայաստան այցելեց Չինական Ժողովրդական Լեռնաշխարհի կայի Էներգետիկների պատվիրակությունը՝ Չինաստանի վառելանյութերի արդյունաբերության մինիստրի տեղակալ

լյու Լան-բոյի գլխավորությամբ: Պատվիրակության անդամները ծանոթացան Հայաստանի էլեկտրակայանների աշխատանքին, նրանց կառուցմանը, ինչպես նաև եղան մի շարք կուլտուրական հաստատություններում և շրջաններում:

ՆՈՐ ԱՅԳԻՆԵՐ.— Այս տարի ձմեռը արտասովոր կերպով մեղմ էր Հայաստանում: Դեռ փետրվարի կեսերին Արարատյան դաշտավայրի, Մեղրու, Շամալգիների, Իջևանի, Ազիզբեկովի, Նոյեմբերյանի շրջանների գյուղացիները ձնոնամուխ եղան այգիների դառնանային խնամքին, ինչպես և նոր տնկումներին: Այս տարի ռեսպուբլիկայում գցվելու են 1.200 հեկտար պտղատու ծառերի և 800 հեկտար խաղողի նոր այգիներ: Կարևոր նշանակություն է տրվում պտղաբուծության զարգացմանը նախապես յին և լեռնային շրջաններում: Նոր տնկումների մոտ 60 տոկոսը կատարվելու է հիշյալ շրջաններում: Պետական տնկարաններում աճեցված են տանձենու, խնձորենու, սալորենու, դեղձենու և ծիրանի մի քանի հարյուր հազար տնկիներ:

ԹԻԲԵՂԱԳՆԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ՆՐԱՎԱՆՈՒՄ.— Գործարկվեց Նրևանի թիթեղադանման գործարանը: Իր արտադրական բնույթով դա բոլորովին նոր ձևաարկություն է Հայաստանում: Այստեղ դանման հատուկ մեքենաների միջոցով պարաստվում են թիթեղ և պողպատաթերթեր: Գործարանի համար կառուցված է բոլորովին նոր շենք, որտեղ տեղադրված են կատարելագործված մեքենաներ, հատուկ հմտյների և այլն: Գործարանը տարեկան կարտադրի մի քանի հազար տոննա պողպատաթերթ և թիթեղ, որը կգործածվի ռեսպուբլիկայում շենքերի տանիքները ծածկելու համար:

ԱՆԱՎՆԵՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Այսօրվա շայտանի պղնձի արդյունաբերության կենտրոնն է Պետությունը ամեն տարի խոշոր միջոցներ է ծախսում քաղաքի բարեկարգման, բնակարանային շինարարության և աշխատավորների առողջապահական ու կենցաղային պայմանների բարելավման համար: Ներկայումս այստեղ կառուցվում են խոշոր բնակելի շենքեր՝ Պղնձաձուլական կոմբինատի, Քիմիական գործարանի և քաղաքի մյուս ձեռնարկությունների աշխատողների համար: Քաղաքի գեղեցիկ շենքերից մեկը կհանդիսանա Պղնձաձուլական կոմբինատի բանվորների կուլտուրայի պալատը, որի շինարարությունն առաջ է տարվում արագորեն: Կարի և կողեղների արտադրության ընդլայնման նպատակով կառուցվում է գործարանային նոր շենք:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶՐՄՈՒՂՆԵՐ.— Հայաստանի լեռնային շրջանների շատ գյուղերի աշխարհագրական դիրքը մեծ դժվարություն է հարուցում դրանց բնակչության ջրամատակարարման համար: Այդպիսի գյուղերն ընկած են բարձր սարահարթերի վրա, իսկ ջրի աղբյուրները գտնվում են անդեղախոր ձորերում: Բնակիչները ստիպված են լինում խիստ զառիթափ ճանապարհով, մի քանի կիլոմետր տարածության վրա իջնելու ձորք՝ խմելու ջուր բերելու համար:

Նրանի Պոլիտեխնիկական Կոնստիտուտի մի խումբ գիտական աշխատողներ մշակել են այդպիսի գյուղերում ջրմուղ անցկացնելու հետաքրքիր եղանակ: Հստակ եղանակի, ձորում, աղբյուրների մոտ պատրաստվում են խոշոր ավազաններ, ապա մեքենայական հատուկ ասեղավորումների օգնությամբ ջուրը մետաղյա խողովակների միջով, ճնշման ներքո մղվում է դեպի լեռնի վեր, որից հետո խողովակներով բաժանվում գյուղի տարբեր մասերը: Զրաճնշվել այդ սարքերը մեծ ծախսեր չեն պահանջում: Այդպիսի ջրմուղներ են կառուցված Ազիզբեկովի շրջանի Գնդեղավ և Մալիշկա, Կոտայքի շրջանի Գառնի և Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղերում: Ներկայումս այդպիսի ջրմուղներ են կառուցվում մի շարք այլ գյուղերում:

ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆԱՆ.— Նրևանից ոչ հեռու, Ստալինի անվան ջրանցքի վրա, որ ոռոգում է Արտաշատի և Վեդու շրջանների հողերը, կառուցվում է մի նոր էլեկտրակայան: Կայանի արտադրած էներգիան հիմնականում ծախսվելու է քաղաքամերձ շրջանների գյուղատնտեսության կարիքների համար: Եինարարական աշխատանքները հիմնականում ավարտված են: Սկսվել է կայանի ջրատար խողովակների և մեքենայական այլ սարքավորումների տեղադրումը:

ՆՈՐ ԶՐԱՆՑՆԵՐ.— Տարեցտարի Հայաստանում ընդարձակվում են ոռոգելի ցանքատարածությունները: Այդ նպատակով ներկայումս պետության միջոցներով կառուցվում են նոր խոշոր ջրանցքներ, ինչպիսիք են Արզնի-Շամիրամի, Կոտայքի, Թալինի ջրանցքները: Բացի դրանից, մի շարք շրջաններում կառուցվում են և այս տարի շահագործման կհանձնվեն տեղական նշանակություն ունեցող ջրանցքներ և պոմպային (ջրան) կայաններ: Այդպիսի կայաններ և ջրանցքներ են կառուցվում Արաբկիրու, Նոյեմբերյանի, Ազիզբեկովի, Մարտունու շրջաններում: Շամշադինի շրջանի Մաղկավան, Այգեհոր և այլ գյուղերի կոլտնտեսությունները իրենց միջոցներով կառուցում են ջրանցքներ, որոնք հնարավորություն կտան յուրացնելու մի քանի հարյուր հեկտար անմշակ հողեր՝ ծխախոտի ցանքի և նոր այգիներ գցելու համար:

ԿՈՄՊՈՋԻՏՈՐ ԿԼԱՌԻԴԻՈ ՍԱՆՏՈՐՈՒԻ ԶՄԵՐԳԸ ՆՐԱՎԱՆՈՒՄ.— Մարտի 29-ին Նրևանում, Հայկական ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ բրադիլիացի նշանավոր կոմպոզիտոր ու դիրիժոր Կլավուդիո Սանտորուի համերգը: Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը, նշանավոր դիրիժորի ղեկավարությամբ, կատարեց Մոցարտի, բրադիլիացի կոմպոզիտորների Լոբոսի, Կ. Գուալեիերի, ինչպես նաև իր՝ Կ. Սանտորուի մի շարք ստեղծագործությունները: Դասիլիք լիփ-լեցուն էր Նրևանի երաժշտասեր հասարակությամբ: Համերգն անցավ մեծ հաջողությամբ:

ՄՈՒՐԱՑԱՆԻ ՄՆԵԳՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ.— Մարտի 24-ին Նրևանի հասարակայնությունը հանդիսավոր կերպով նշեց հայ ականավոր գրող Մուրացյանի (Գրիգոր Տեր-Հովհաննիսյանի) ծննդյան 100-ամյակը: Հայկական ֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում այդ առթիվ տեղի ունեցավ հանդիսավոր երեկո, որին ներկա էր մեծ թվով հասարակություն:

Բեմի խորքում գրված էր հորեկարի մեծագույն նկարը, որը պատրաստված էր հատկապես երեկոյի համար։ Նախագահության սեղանի մոտ իրենց տեղերն էին գրավել մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, գրողներ Դ. Դեմիրճյանը, Արազին, Ս. Ջորյանը, բանաստեղծներ Ն. Ջալալյանը, Գ. Սարյանը և ուրիշներ։ Երկու ժամ քաջաց հորեկարական հանձնաժողովի նախագահ Դ. Դեմիրճյանը, որը համառոտակի բնութագրեց Մուրացյանի գրական ժառանգությունը, որպես հայ ժողովրդի հոգևոր կուլտուրայի գանձերից մեկը։

Մուրացյանի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցում կարդաց գրականագետ Վ. Պարտիզուհին։

Այնուհետև կարդացվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշումը՝ Մուրացյանի հիշատակը հավերժացնելու մասին։ Ներկա եղողները որոշումն ընդունեցին երկարատև ծափահարություններով։ Որոշված է Սևանի շրջանի Սովագյուղում (նախկին Զիբուխլու) դնել Մուրացյանի կիսանդրին, առաջիկա 3 տարում հրատարակել Մուրացյանի երկերի լրիվ ժողովածուն, 1956 թվականին մի հատորով հրատարակել հեղինակի ընտիր երկերը ռուսերեն լեզվով։ Երևանի միջնակարգ դպրոցներից մեկը կոչվելու է Մուրացյանի անունով։

Հանդիսավոր երեկոյի վերջում կայացավ համերգ։

Մուրացյանի երկերը մեծ ժողովրդականություն են վայելում Հայաստանում։ Վերջին 25 տարում նրա աշխատությունները բազմիցս հրատարակվել են առանձին գրքերով։ Երկու անգամ հրատարակվել է հեղինակի երկերի ժողովածուն՝ սկզբում 4, և ապա 5 հատորով։ Ռուսերեն լեզվով հրատարակվել են հուշակալը «Գեորգ Մարդպետունի» պատմական վեպը, «Անդրեաս երեցը», «Առաքյալը», «Նոյի ագուսվը»։ Անգրկովկասի հայկական բեմերի վրա մինչև օրս էլ մեծ հաջողությամբ խաղացվում է «Ռուզան» դրաման։

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Մարտի կեսերին երևանում, Հայաստանի նկարիչների տանը բացվեց վրաց նշանավոր նկարչուհի Քամարա Աբակելիայի ստեղծագործությունների հետմահու ցուցահանդեսը։ Հանգուցյալ նկարչուհին (վախճանված 1953 թվականին 48 տարեկան հասակում) վրաց ժամանակակից կերպարվեստի բնագավառում հայտնի էր որպես տաղանդավոր գրաֆիկ, քանդակագործ և թատրոնական նկարիչ։ Ի թիվս այլ գրքերի նա մեծ վարպետությամբ նկարադարձել է «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական անմահ հերոսավեպի վրացերեն հրատարակությունը (1939 թ.)։ Ցուցահանդեսը, որը հանդիսացավ երկու եղբայրական ժողովուրդների արվեստի աշխատողների բարեկամական կապերի մի գեղեցիկ արտահայտություն, մեծ հետաքրքրություն առաջ բերեց մայրաքաղաքի հասարակայնության շրջաններում և դիտվեց լայն խավերի կողմից։

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԵՐԱԺԵՏԱԳԵՏՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Մարտի 17-ին Երևան ժամանեց Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի երաժշտագետների պատվիրակությունը՝ պրոֆեսոր Օտտեմար Գերստերի զբլխավորությամբ։ Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության, Կոմպոզիտորների միության և Արտասահ-

մանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության կողմից պատվիրակությանը ցույց տրվեց պատշաճ, ընդ ընդունելություն։ Հյուրերը Երևանում մնացին մի քանի օր, որի ընթացքում ծանոթացան Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեության հետ, այցելեցին երաժշտական ուսումնական հաստատությունները և կուլտուր-լուսավորական մի շարք հիմնարկություններ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ-ՑՈՒՄ.— Սույն թվականի մարտի 22-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովը։ Ժողովը բացեց ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Ակադեմիայի անցյալ 1954 թվականի գործունեության մասին զեկուցեց Ակադեմիայի գիտական քարտուղար Վ. Գուլբանյանը։

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի գիտնականները լուրջ աշխատանքներ են կատարել ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրների ուսումնասիրության գծով։ Ակադեմիայի գործունեության մեջ հատկապես խոշոր տեղ են գրավել ֆիզիկայի, մաթեմատիկայի, երկրաբանության, աստղաֆիզիկայի, էլեկտրատեխնիկայի, քիմիայի և բիոլոգիայի բնագավառներում կատարվող հետազոտությունները, որոնք տվել են հետաքրքիր և արժեքավոր արդյունքներ։

Հասարակական գիտությունների գծով առանձնահատուկ տեղ է տրվել հայ ժողովրդի նորագույն (սովետական շրջանի) պատմության ուսումնասիրության հարցերին։ Լույս է ընծայված «Սովետական Հայաստանի պատմության ուրվագծեր» առաջին մասը։ Ավարտված է և տպագրության է պատրաստվում «Հայ ժողովրդի պատմության» դասագրքի բոլոր երեք հատորները։ Հրատարակված է «Հայ գրականության պատմության» դասագրքեր երեք հատորով։

Զեկուցումից հետո հետաքրքիր ու բովանդակալից ճառով հանդես եկավ Ակադեմիայի իսկական անդամ Ա. Մնջոյանը, որը կանգ առավ զեղագործական քիմիայի խնդիրների վրա։

Ժողովի վերջում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը մի խումբ գիտնականների հանձնեց պատվոգրեր՝ գիտական արժեքավոր աշխատությունների համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒԺԱՎԱՑՐԵՐԸ 1955 ԹՎԱԿԱՆԻՆ.— Հայաստանի բուժավայրերը (կուրորտները) պատրաստվում են 1955 թվականի սեզոնին։ Այս տարի Արզնիի, Զերմուկի և Դիլիջանի սանատորիաները կընդունեն մոտ 12,000 հիվանդներ՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ Սովետական Միության տարբեր վայրերից։ Բոլոր երեք սանատորիաներում սկսվել են բարեկարգման աշխատանքները։ Արզնիում և Զերմուկում կառուցվում են հանքային ջրերի նոր սրահներ, իսկ Զերմուկում՝ նոր լողաբաններ։ Հայաստանի սննդի արդյունաբերության մինիստրությունը Արզնիում կառուցում է նոր սանատորիա։

Վերահիշյալ երեք բուժավայրերի հետագա բարեկարգման, նորոգման, ինչպես նաև նոր շինարարության համար պետությունն այս տարի հատկացրել է 32,500,000 ռուբլի։

«ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ 500-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ.— Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում սույն թվականի մարտի 11-ին տեղի ունեցավ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի 500-րդ ներկայացումը՝ հաջված թատրոնի հիմնադրման օրից։ Ինչպես հայտնի է, այդ օպերան ստեղծված է անմահ Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի հիման վրա։ Օպերան բեմադրել էր ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Ա. Գույալյանը։ Հորեյլանական ներկայացման դիրիժորն էր արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Ստեփանյանը։ Սարայի դերը իրեն հատուկ հմայրով կատարեց «Անուշ»ի առաջին ներկայացման մասնակից, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Շարա Տալյանը։ Զերմ ընդունելության արժանացավ Անուշի դերակատար, երիտասարդ դերասանուհի Ն. Միքայելյանը։

Ներկայացումը անցավ մեծ հաջողությամբ։ Թատրոնի դահլիճը լիկ-լեցուն էր հանդիսականներով։ Դերասաններին և դերասանուհիներին մատուցվեցին ծաղկեփնջեր։ Հասարակության երկարատև ծափերի տակ դերասանուհի Ն. Միքայելյանը իրեն մատուցված ծաղկեփնջերը հանձնեց ՍՍՄԿ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Դանիելյանին, որը ժամանակին եղել է Անուշի հռչակավոր դերակատարը։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՎԱՐՏԵՏՆԵՐ.— Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, ուսանողների կատարողական ունակությունները կատարելագործելու նպատակով, ստեղծված են մոտ 10 կվարտետներ։ Դրանցից մեկը բաղկացած է ուսանողուհիներից։ Վերջերս կանացի այդ կվարտետը մեծ հաջողությամբ ելույթ ունեցավ Հայկական ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում՝ բազմամարդ հասարակության ներկայությամբ։ Դա կանացի միակ կվարտետի առաջին հրապարակային համերգն էր։

ԿԻՆՈԱԿՆԱՐԿ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԻԱՆԻՅԱՆԻ ՄԱՍԻՆ.— Երևանի կինոստուդիան նկարահանել է 2 մասից բաղկացած կինոակնարկ հայ մեծանուն գրող-հրապարակախոս Միքայել Նալբանդյանի մասին։ Կինոակնարկը պատկերում է մեծ լուսավորչի ծննդյան 125-ամյակի տոնակատարությունը Երևանում, Մոսկվայում և գրողի ծննդավայր Նոր-Նախիջևանում։ Նկարահանված են մի ամբողջ շարք տեսարաններ այն վայրերից, որոնք կապված են եղել Միքայել Նալբանդյանի կյանքի և

գործունեության հետ։ Ցույց է տրված Նոր-Նախիջևանի այն տունը, որտեղ 1829 թվականին ծնվել է գրողը, Մոսկվայի նախկին Լազարյան ճեմարանը, որտեղ դասավանդել է մեծ հայրենասերը, Պետրոսյանի Պետրոս-պապուլյան բերդը, որտեղ բանտարկված է եղել ժողովրդի շահերին անսահմանորեն նվիրված մարտիկը և այլն։

ՆՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ.— Սովետական Հաստատում բացի հանրակրթական դպրոցներից և ուսումնական այլ հաստատություններից, գոյություն ունեն մեծահասակների հանրակրթական միջնակարգ դպրոցներ, որտեղ երիտասարդությունը սովորում է առանց հիմնական դրամաներից կտրվելու։ Ներկայումս ռեսպուբլիկայում գործում են 66 դպրոցներ բանվոր երիտասարդության և 114 դպրոց՝ գյուղական երիտասարդության համար։ Այդ դպրոցներում միջնակարգ կրթություն են ստանում 16,513 հոգի։

ՏՈՒՅԻ ԱՐԳՅՈՒՆԱԼԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՔՆԱՅԱՑՈՒՄԸ.— Հայաստանը տուֆ քարի անսպառ պաշարներ ունի։ Ներկայումս ռեսպուբլիկայում 8 անգամ ավելի տուֆ է արդյունահանվում, քան 1940 թվականին։ Սեփական կարիքները հոգալուց բացի, անցյալ տարի այդ հիանալի շինարարից 300,000 խրոնարդ մետր արտահանվեց հարևան ռեսպուբլիկաները։

Չնայած այդպիսի աճին, այնուամենայնիվ տուֆի արդյունահանումը անբավարար է, որովհետև աշխատանքները հիմնականում կատարվում են ձեռքով։ Քարի արդյունահանման աշխատանքների մեքենայացումը ներկայումս հրամայական խնդիր է դարձել։ Այդ ուղղությամբ աշխատում են և՛ շինարարական կազմակերպությունները և՛ գիտական հաստատությունները։ Որոշ արդյունքներ արդեն իսկ ստացվել են։ Արթիկտուֆի բարահանքերում, որոնք խոշորագույն են Հայաստանում, գործադրվում են քար կտրող մեքենաներ։ Դրանք պատրաստված են Երևանի հաստոցաշինական գործարանում։ Ընթացիկ 1955 թվականին այդ մեքենաների թիվը կկրճատվի։

Բանն այն է, որ վերահիշյալ մեքենաները տուֆը կտրում և հանում են հսկայական կտորներով, որոնք հետո հարկ է լինում ձեռքով հատել ու փորքացնել՝ ըստ պահանջվող չափերի։ Ներկայումս պատրաստվում են այլ կարգի մեքենաներ, որոնք փոխարինելու են վերահիշյալ ձեռքի աշխատանքը։

